

Պ-539-31.03.2020,25.05.2020-ՊԻ-011

**«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հանրաքվեի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-155-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածը 2-րդ մասից հետո ավելացնել նոր 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասեր.

«3. Այն դեպքում, երբ ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է սույն օրենքով նախատեսված հանրաքվեն նշանակվելուց հետո, ապա մինչեւ ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելն սկսված հարցը հանրաքվեի դնելու հետ կապված բոլոր գործողություններն ու ժամկետները կասեցվում են իրավունքի ուժով: Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելուց հետո 12 ժամվա ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանդես է գալիս հանրաքվեի գործընթացը կասեցնելու մասին հայտարարությամբ:

4. Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումը, որի հիման վրա նշանակված հանրաքվեն չի անցկացվել ռազմական կամ արտակարգ դրության պատճառով, կարող է ուժը կորցրած ճանաչվել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

5. Եթե մինչեւ ռազմական կամ արտակարգ դրության ավարտը Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովի կողմից հանրաքվեի դնելու անցկացնելու մասին որոշումն ուժը կորցրած չի ճանաչվել, ապա հանրաքվեի գործընթացը վերսկսվում է սույն օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեն, եթե մինչեւ ռազմական կամ արտակարգ դրության ավարտն Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ուժը չի կորցրել, ապա անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50, եւ ոչ ուշ, քան 65 օր հետո: Ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը ընդունում է հրամանագիր, որով նշանակվում է չանցկացված հանրաքվեն՝ քվեարկության օրը պետք է լինի կիրակի:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է պատճառաբանված որոշմամբ փոփոխելու առանձին գործողությունների կատարման ժամկետների հաշվարկը՝ պայմանավորված վերսկսված հանրաքվեի պատշաճ կազմակերպման անհրաժեշտությամբ եւ սահմանելու վերսկսված հանրաքվեի գործընթացի նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների նոր ժամանակացույց:»:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.1, 1.2, 1.3 եւ 1.4 կետերով.

«1.1 Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեի դեպքում քարոզչության ֆինանսավորման հիմնադրամում մուտքերը սառեցվում են մինչև հանրաքվեի վերսկսումը: «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչության կողմերի դիմումների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս հիմնադրամից վճարումներ կատարել մինչև հանրաքվեի կասեցումը կատարված գործարքների համար: Հանրաքվեի վերսկսումից հետո քարոզչության կողմերը կարող են օգտագործել իրենց հիմնադրամներում մնացած միջոցները:

Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված եւ վերսկսված հանրաքվեի «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչության հիմնադրամների հաշվին կատարված մուծումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 150 000-ապատիկը: Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված եւ վերսկսված հանրաքվեի հիմնադրամների հաշվին կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների կամ կուսակցությունների դաշինքների մուծումների ընդհանուր չափը քարոզչության հիմնադրամ յուրաքանչյուրի համար չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 40 000-ապատիկը:

1.2 Եթե մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտը Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովի կողմից հանրաքվեի դնելու մասին Ազգային ժողովի որոշումն ուժը կորցրած է ճանաչվել, ապա Ազգային ժողովի կողմից համապատասխան որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ տասն օրվա ընթացքում «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչության կողմերն իրավունք ունեն կատարել իրենց պայմանագրային պարտավորությունները: «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչության կողմերն իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու նպատակով իրավունք ունեն համալրել հիմնադրամները՝ սույն օրենքով սահմանված կարգով, բայց ոչ ավել քան նախատեսված է չկատարված պայմանագրային պարտավորություններով:

1. 3 Մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտը Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովի կողմից հանրաքվեի դնելու մասին որոշումը ուժը կորցրած ճանաչելուց հետո տասնմեկերորդ օրը հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվում են: Հիմնադրամներում մնացած միջոցները քարոզչության կողմերն անկանխիկ եղանակով կարող են օգտագործել բարեգործական նպատակներով՝ մեկամսյա ժամկետում: Հիմնադրամներում մնացած միջոցները չօգտագործելու դեպքում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

1. 4 Մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտը Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովի կողմից հանրաքվեի դնելու մասին որոշման ուժը կորցրած ճանաչելու դեպքում ընտրական հանձնաժողովներն ու իրավասու մարմինները ըստ անհրաժեշտության ուժը կորցրած են ճանաչում ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեի կազմակերպման նպատակով ընդունված ենթաօրենսդրական իրավական ակտերը:»:

Հոդված 4. Անցումային եւ եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ին նշանակված հանրաքվեի գործընթացի վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՆՐԱՔԿԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼՐԱՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Հանրաքվեի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-155-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածը 2-րդ մասից հետո ավելացնել նոր 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասեր.

«3. Այն դեպքում, երբ ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է սույն օրենքով նախատեսված հանրաքվեն նշանակվելուց հետո, ապա մինչեւ ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելն սկսված հարցը հանրաքվեի դնելու հետ կապված բոլոր գործողություններն ու ժամկետները կասեցվում են իրավունքի ուժով: Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելուց հետո 12 ժամվա ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանդես է գալիս հանրաքվեի գործընթացը կասեցնելու մասին հայտարարությամբ:

4. Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումը, որի հիման վրա նշանակված հանրաքվեն չի անցկացվել ռազմական կամ արտակարգ դրության պատճառով, կարող է ուժը կորցրած ճանաչվել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

5. Եթե մինչեւ ռազմական կամ արտակարգ դրության ավարտը **Սահմանադրության փոփոխությունների նախագիծն** Ազգային ժողովի կողմից հանրաքվեի **դնելու** անցկացնելու մասին որոշումն ուժը **կորցրած չի ճանաչվել չի կորցրել**, ապա հանրաքվեի գործընթացը վերսկսվում է սույն օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեն, եթե մինչեւ ռազմական կամ արտակարգ դրության ավարտն Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ուժը չի կորցրել, ապա անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50, եւ ոչ ուշ, քան 65 օր հետո: Ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը ընդունում է հրամանագիր, որով նշանակվում է չանցկացված հանրաքվեն՝ քվեարկության օրը պետք է լինի կիրակի:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է պատճառաբանված որոշմամբ փոփոխելու առանձին գործողությունների կատարման ժամկետների հաշվարկը՝ պայմանավորված վերսկսված հանրաքվեի պատշաճ կազմակերպման անհրաժեշտությամբ եւ սահմանելու վերսկսված հանրաքվեի գործընթացի նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների նոր ժամանակացույց:»:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.1, 1.2, 1.3 եւ 1.4 կետերով.

«1.1 Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեի դեպքում քարոզչության ֆինանսավորման

հիմնադրամում մուտքերը սառեցվում են մինչև հանրաքվեի վերսկսումը: «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչության կողմերի դիմումների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս հիմնադրամից վճարումներ կատարել մինչև հանրաքվեի կասեցումը կատարված գործարքների համար: Հանրաքվեի վերսկսումից հետո քարոզչության կողմերը կարող են օգտագործել իրենց հիմնադրամներում մնացած միջոցները:

Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված եւ վերսկսված հանրաքվեի «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչության հիմնադրամների հաշվին կատարված մուծումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 150 000-ապատիկը: Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված եւ վերսկսված հանրաքվեի հիմնադրամների հաշվին կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների կամ կուսակցությունների դաշինքների մուծումների ընդհանուր չափը քարոզչության հիմնադրամ յուրաքանչյուրի համար չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 40 000-ապատիկը:

1.2 Եթե մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտը Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովի կողմից հանրաքվե ի դնելու անցկացնելու մասին Ազգային ժողովի որոշումն ուժը կորցրած է ճանաչվել կորցրել է, ապա Ազգային ժողովի կողմից համապատասխան որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ տասն օրվա ընթացքում «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչության կողմերն իրավունք ունեն մարել կատարել իրենց պայմանագրային պարտավորությունները: «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչության կողմերն իրենց պայմանագրային պարտավորությունները մարելու կատարելու նպատակով իրավունք ունեն համարել հիմնադրամները՝ սույն օրենքով սահմանված կարգով քայքայելու քան նախատեսված է չկատարված պայմանագրային պարտավորություններով:

1.3 Մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտը Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովի կողմից հանրաքվե ի դնելու անցկացնելու մասին որոշում ունի ուժը կորցրածն է ճանաչելուց հետո տասնմեկերորդ օրը հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվում են: Հիմնադրամներում մնացած միջոցները քարոզչության կողմերն անկանխիկ եղանակով կարող են օգտագործել բարեգործական նպատակներով՝ մեկամսյա ժամկետում: Հիմնադրամներում մնացած միջոցները օգտագործելու դեպքում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

1.4 Մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտը Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովի կողմից հանրաքվե ի դնելու անցկացնելու մասին որոշման ուժը կորցրածն է ճանաչելու դեպքում ընտրական հանձնաժողովներն ու իրավասու մարմինները ըստ անհրաժեշտության ուժը կորցրած են ճանաչում ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեի կազմակերպման նպատակով ընդունված ենթաօրենսդրական իրավական ակտերը ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեի կազմակերպման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայացրած բոլոր իրավական ակտերն իրավունքի ուժով ուժը կորցնում են»:

Հոդված 4. Անցումային եւ եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ին նշանակված հանրաքվեի գործընթացի վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-539-31.03.2020-ՊԻ-011/1), «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-539՝-31.03.2020-ՊԻ-011/1) ԵՎ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-539՝-31.03.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑԿԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ	«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	<p>1. Նախագծի 3-րդ հոդվածի 1. 1 կետի առաջին նախադասությունից հետո ավելացվել է հետևյալ նախադասությունը. «<i>«ԱՅՈ» կամ «ՈՂ» քարոզչության կողմերի դիմումների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս հիմնադրամից վճարումներ կատարել մինչև հանրաքվեի կատարումը կատարված գործարքների համար»:</i></p> <p>2. Նախագծի 3-րդ հոդվածի 1. 3 կետի վերջում ավելացվել է հետևյալ նախադասությունը. «<i>Հիմնադրամներում մնացած միջոցները չօգտագործելու դեպքում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե»:</i></p> <p>3. Նախագծի 3-րդ հոդվածի 1. 4 կետի «նազմական կամ արտակարգ</p>	Ընդունվել է	Ընդունվել է

			<p>դրության պատճառով չանցկացված հանրաքվեի կազմակերպման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայացրած բոլոր իրավական ակտերն իրավունքի ուժով ուժը կորցնում են» բառերը փոխարինվել են «ընտրական հանձնաժողովներն ու իրավասու մարմինները ըստ անհրաժեշտության ուժը կորցրած են ճանաչում ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեի կազմակերպման նպատակով ընդունված ենթաօրենսդրական իրավական ակտերը» բառերով:</p>		
2.	<p><i>Պատգամավոր՝</i></p> <p><i>Աննա Կարապետյան</i></p>	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին սահմանադրական օրենքի նախագիծ</p>	<p>Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) <u>38-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ քվանդակությամբ՝ նոր 18.2-րդ կետով.</u></p> <p><u>«18.2) Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային ժողովի որոշումը, որի հիման վրա նշանակված հանրաքվեի անցկացումը «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով</u></p>	Ընդունվել է	Ընդունվել է

			<p><u>սահմանված կարգով կատեցվել է, ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը.»:</u></p> <p>Հոդված 2.</p> <p>2) <u>լրացնել նոր` 8-րդ մաս.</u> <u>«8. «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը կարող է ներկայացնել Ազգային ժողովի կողմից Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ, որը Կանոնակարգի 100-րդ և 101-րդ հոդվածներով սահմանված կարգով Ազգային ժողովի նիստում քննարկվում, ընդունվում է:</u></p> <p>1) <u>Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասով ընդունված որոշման դեպքում</u></p>		
--	--	--	---	--	--

			<p><u>պատգամավորների</u> <u>ընդհանուր</u> _____ <u>թվի</u> <u>ծայների</u> _____ <u>առնվազն</u> <u>երկու երրորդով,</u></p> <p>2) <u>Սահմանադրության</u> <u>202-րդ հոդվածի 3-րդ</u> <u>մասով</u> _____ <u>ընդունված</u> <u>որոշման</u> _____ <u>դեպքում</u> <u>պատգամավորների</u> <u>ընդհանուր</u> _____ <u>թվի</u> <u>ծայների</u> _____ <u>առնվազն</u> <u>երեք հինգերորդով:»:</u></p> <p>Հոդված 3. Օրենքը լրացնելի հետևյալ <u>քվանդակությամբ՝ նոր 107.1-ին</u> <u>հոդվածով.</u></p> <p>«Հոդված _____ 107.1. Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային ժողովի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը ներկայացնելու և քննարկելու կարգը</p> <p>1. <u>Սահմանադրության</u> <u>փոփոխությունների</u> _____ <u>նախագիծը</u> <u>հանրաքվեի դնելու մասին Ազգային</u></p>		
--	--	--	---	--	--

			<p><u>ժողովի որոշումը, որի հիման վրա նշանակված հանրաքվեի անցկացումը «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով սահմանված կարգով կատարվել է, ուժը կորցրած ճանաչելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու հրավույնը ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը կամ Կառավարությունը:</u></p> <p>2. <u>Նախագիծն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվում և շրջանառության մեջ է դրվում ընդհանուր կարգով՝ մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտը: Արտակարգ կամ ռազմական դրությունն ավարտվելու դեպքում նախագիծը շրջանառությունից հանվում է:</u></p> <p>3. <u>Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ընդունված Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային ժողովի որոշումն ուժը կորցրած է</u></p>		
--	--	--	--	--	--

			<p><u>Ճանաչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:</u></p> <p>4. <u>Սահմանադրության 202-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ընդունված Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային ժողովի որոշումն ուժը կորցրած է ճանաչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:</u></p> <p>5. <u>Ազգային ժողովի նախագահը Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային ժողովի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Ազգային ժողովի որոշումն ստորագրում և հրապարակում է անհապաղ:</u></p> <p>Հոդված 4. <u>Օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4.1 կետով.</u></p> <p>«4.1) <u>Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային</u></p>		
--	--	--	---	--	--

			<p><u>ժողովի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը՝ ռազմական կամ արտակարգ դրությունն ավարտվելու դեպքում.»: </u></p>		
<p>3.</p>	<p>Հեղինակ</p>	<p>«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին սահմանադրական օրենքի նախագիծ</p>	<p>Հոդված 2. Օրենքի 86-րդ հոդվածում՝</p> <p>1) <u>2-րդ մասում «ուղարկում է Սահմանադրական դատարան» բառերից հետո լրացնել «Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը Սահմանադրության անփոփոխելի հոդվածներին համապատասխանության տեսանկյունից գնահատելու համար» բառերը.4-րդ մասում «նրա որոշումը ստանալուց հետո» բառերը փոխարինել «նրա</u></p>	<p>Ընդունվել է</p>	<p>Ընդունվել է</p>

			<p><u>որոշումն ուժի մեջ մտնելուց հետո» բառերով.</u></p> <p>2) <u>3-րդ մասում</u> <u>«Սահմանադրական</u> <u>դատարանը» բառերից</u> <u>հետո լրացնել</u> <u>«Սահմանադրության</u> <u>փոփոխությունների</u> <u>նախագծի</u> <u>սահմանադրականությունը</u> <u>Սահմանադրության</u> <u>անփոփոխելի</u> <u>հոդվածներին</u> <u>համապատասխանության</u> <u>տեսանկյունից</u> <u>գնահատելիս» բառերը.</u></p> <p>3) <u>4-րդ մասում</u> <u>«Սահմանադրական</u> <u>դատարանը» բառերից</u> <u>հետո լրացնել</u> <u>«Սահմանադրության</u> <u>փոփոխությունների</u> <u>նախագծի</u> <u>սահմանադրականությունը</u> <u>Սահմանադրության</u></p>		
--	--	--	--	--	--

			<p><u>անփոփոխելի</u> <u>հողվածներին</u> <u>համապատասխանության</u> <u>տեսանկյունից</u> <u>զնահատելիս»</u> <u>բառերը,</u> <u>իսկ</u> «նրա որոշումը ստանալուց հետո» բառերը փոխարինել «նրա որոշումն ուժի մեջ մտնելուց հետո» բառերով</p>		
4.	<i>Հեղինակ</i>	<p>«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ</p>	<p>Իրականացվել են տեխնիկական բնույթի փոփոխություններ՝ (տես տեղեկանքը)</p>	Ընդունվել է	Ընդունվել է